«ԱՍ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու վերաբերյալ

2019-07-09

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/464 Ա

09.07.2019

«ԱՍ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների
փոփոխություններին համաձայնություն տալու վերաբերյալ

Ուսումնասիրելով «ԱՍ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ (այսուհետ՝ նաև գրավատուն) կողմից 2019 թվականի հուլիսի 2-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված գրավատան կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխությունները և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ «ԱՍ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ գրավատան կողմից 2019 թվականի հուլիսի 2-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ